

մէակն պետութեան միւս մասանց հետ: Կարեւոր կէտեր դարձան՝ իբրև գլխաւոր բանակատեղիներ՝ Մելիտինէ (72—74 տարիները) եւ վերը՝ բուն Փոքր-Հայոց հիւսիսարեւելեան ծայրը՝ Հայաստանի սահմանին վրայ, այնպիսի դերը մէջ՝ ուսկէ կարելի էր վերին Եփրատայ եւ ձորոխի եւ դարձեալ Գայլի գծերուն վրայ հսկել, Սատաղ՝ զոր կ'երեւայ կանուխէն իսկ զօրանիստ ընտրած են Հռոմայեցիք, թերեւ արդէն Ներոնի ատեն, բայց յամենայն դէպս այս ատեն: Սատաղայէ Մելիտինէ տանող կարեւոր սահմանադիւժ ուղին շինուած կ'երեւայ արդէն 75ին Յ. Ք. (արձ.) եւ արդէն Տրապիզոնէ Մելիտինէ եւ Շամշատ տանող՝ Հայաստանի սահմանաց քովէն անցնող՝ ուղեգիծը շատ կարեւոր էր կանուխէն հռոմէական բանակաց համար, երբ տակաւին չէին աւարտած (Դոմետիանոս եւ Ներուայ օրով) փոքրասիական մեծ ռազմաւարները: Ասոնց մէջ կարեւորագոյնն էր Ամիսոսէ (Սամսոն) Կոմանայի վրայէն մինչեւ Մելիտինէ հասնող գիծը: Բազմաթիւ մղոնաքարեր՝ նաեւ այսօր՝ կը ցուցնեն իրենց արձանադրութեամբք այս գծերուն շինութիւնը, նորոգութիւնքն ու ժամանակը: Եւ թէ ո՛րչափ կանուխէն Հռոմայեցիք տեսած էին այս գծերուն կարեւորութիւնն, յայտնի է անկէ որ արդէն Պոմպէոսի հիմնարկութեանց մեծագոյն մասն այս գծերուն վրայ կ'իյնայ¹⁰: Սատաղա կարեւոր կենդրոն էր բանակին, նաեւ պարենաւորման տեսակէտով, եւ Տրապիզոնս՝ իւր արշաւանաց ատեն՝ հոն փոխադրած էր Գանուրէն Յե. Ասողիւնարեան լեզէոնը, որ հոն մինչեւ նաեւ Յ. դար, եւ այն ատեն սկսաւ շինուել մեծ կայուն բանակատեղը (castra stativa) յիշեալ լեզէոնի անթիւ նշաններ կան նաեւ այսօր (Leg. XV եւն կնքով), եւ բնական է որ բանակատեղոյն չորս կողմը յառաջ եկաւ նաեւ քաղաք մը: Մելիտինէ էր ԺԲ. Շամշատ, ինչպէս որ բաց ի դաշնակցաց գնդերը կը յիշուին հետզհետէ թիւեր ու վաշտեր՝ նաեւ կանուխէն՝ բուն-փոքրհայկան շրջաններու մէջ, եւ Տրապիզոնսի ատենէն սկսան կազմուել նաեւ նոր հայ բանակներ¹¹: Իւր

¹⁰ Հմմտ. Munro, ի JHS, 1901, p. 52 ff., Անգլերէն, Պոնտ. Ուսումն., Ա., § 40 եւ այլուր:
¹¹ Եփրատի ամբողջ սահմանագծի մասին հմմտ. Գեղեցիկ գործս՝ վիկտոր Շապոյ, Եփրատի սահմանագլուխը՝ Պոմպէոսի ժամանակէն մինչեւ Արարայցոց աշխարհակալութիւնը:

զիրքովը կարեւոր կեդրոն էր Նիկոպոլիս, որմէ ուղիղծերուցանց մը կը բաժնուէր ամէն կողմ եւ դէպ ի Հայաստան տանող ճամբան կ'անցնէր ասկէ: Իւր կարեւորութիւնը մեծցաւ իբր դաւառական մայրաքաղաք բուն Փոքր-Հայոց, եւ կ'երեւայ զարդարուեցաւ Աղբիւնոսէ՝ որ այցելեց 124ին Յ. Ք.: Կարեւոր է հոս շեշտել թէ Նիկոպոլիս բաց ի Յաղթական Արամաղի (Ձեւս Նիկոպոլոս) եւ Յաղթութեան տաճարներէն, որոնք իւր դրամոց վրայ կ'երեւան (Բարբլոն եւ Ռայնախ, Ա., 98), ունէր նաեւ հրամայեալ պաշտօնն Կայսերաց, հետեւաբար Կայսերաց բազիլիկն ալ, որ պարտաւորելի պաշտօն մըն էր դաւառի մը մայրաքաղաքին, ուր կը գումարուէր նաեւ «աշխարհաժողովը» («քինոն»): Նաեւ այս կողմանէ ուրեմն, ինչպէս կը ցուցնեն նաեւ արձանադրութիւնք (Անդէրսըն-Կիւմոն Հւք. Թ. 358 եւ 290), Փոքր Հայք անջատ էին՝ Գամբաց նահանգին մէջ մուծուած Պողեմոնականէն եւ մնացեալ մասերէն, ուստի հոս կար դատ Փոքր-Հայկան քրմապետ մ'ալ՝ Հայապետ մը («Արմենիարքէս»), նոյն պաշտամամբք՝ ինչ որ ունէր Պոնտապետը («Պոնտարքէս») «ի Նէոկեսարիա՝ ի մայրաքաղաքին Պոնտոսի», ուր կը գումարուէր «Պոնտոսի» (Պողեմոնեան եւ Գաղատական) աշխարհաժողովը՝ ներկայացուցիչներէ քաղաքացս (իրենց դաւառներով) Նէոկեսարիա, Սերաստիա (Կողովներէ), Կոմանա, Ամասիա, Ձելա եւ Սերաստոպոլիս (վերջինս՝ արդի Սուլուսէրայ), Այս քրմապետաց պաշտօնն էր նաեւ տալ ներկայացուցիչներ (սուսերամարտիաց, դադանամարտք եւն), որոնք այս «Պոնտոս»ի համար կը արուէին ի Նէոկեսարիա (հմմտ. Անդէրսըն, Պոնտ. Ուսումն., Ա., § 16, եւ այլուր): Արդէն գիտէինք նաեւ ուրիշ կողմանէ թէ Կողովներէ (Սերաստիա) իբր մասն Պողեմոնական Պոնտոսի՝ նաեւ Կապադոկիլիա նահանգին մուծուելէն ետքը՝ մնացած էր նոյնպէս Նէոկեսարիոյ ներքեւ: Փոքր-Հայոց հետ Սերաստիա գործ չունի ուղղակի ուրեմն նաեւ հռոմէական շրջանին, մինչեւ որ Դիոկղետիանոս՝ պետական ուրիշ հիմնական փոփոխութեանց հետ, սահմանեց՝ ոյժ տալով հայկական սահմանադաւառաց՝ ո՛չ միայն զանոնք բաժնել Կապադոկիլիան նահանգէն, այլ նաեւ անոնց վրայ յաւելուլ դաւառներ Գամբաց եւ Պոնտոսի աշխարհներէն, որուն մասին քիչ մ'ետքը:

Միւս կողմանէ Փոքր-Հայք որեւէ բացառութիւն չէին կրնար կազմել հռոմէական վարչութեան ներքեւ, եւ ամէն կողմանէ Կապադոկիլիոյ նահանգին բախտակից՝ ինչպէս հեթանոսական կենաց, նոյնպէս քրիստոնէականին մէջ, որ շատ կանուխէն մուտք գտաւ, եւ հետեւաբար մաս էր Գամբական եկեղեցւոյն ամենայն մասամբ: Եւ վկայից ու խոստովանողաց շրջանին՝ ինչպէս դամբական ամէն եկեղեցի, ունեցան նաեւ փոքրհայկանք իրենց վիճակներու բազմութիւնը, ինչպէս Նիկոպոլիսն իւր ԽՆ. վկայքն (որոնք ծածուկ իրենց մէջ հայերէն կը խօսէին՝ հռոմէացի պաշտօնեաներէն չհասկըցուելու համար), ինչպէս Արաւրակա իւր Ս. Եւտրատիոսը՝ աղատ ալ տոհմէ (հոս ալ «ռամիկ» Մարդարիոս «ի բարբառ հայերէն» կը խօսի), այնպէս ինչպէս Սերաստիա՝ իւր Խ. վկայքն, բայց նաեւ իւր Ս. Բղասիոս եւ Աթանաղիոնէս հայրապետները եւն. — յիշելու համար միայն գասոնք: Ուստի արդէն կանուխէն մտած քրիստոնէութիւնը (ի Սերաստիա՝ արդէն Բ. դարէն եւն) շատ տարածուած էր եւ օրինակի համար Դիոկղետիանոսի ատեն քրիստոնէից թիւն արդէն նշանաւոր էր Փոքր-Հայոց ամէն կողմը, Սատաղա, Արաւրակա եւն, եւ Նիկոպոլիսոյ եկեղեցին՝ ըստ վկայութեան Ս. Բարսիլի՝ մայր էր եկեղեցւոյն Կողովնոյ: Անոր համար ալ ինչպէս Նիկիոյ եւ ալ տիեզերական ժողովոց՝ նոյնպէս դաւառական սիւնհոգոսաց բազմութեան մը մէջ կը գտնենք փոքրհայկան եպիսկոպոսաց ստորադրութիւնք, այս ատեն արդէն ընդարձակ ալ շրջանով, քանի որ ծագում առած էին Հռոմէական (Ա. եւն) «Հայք»: Պէտք է չունինք այս տեղ նկատի առնուլ այն խնդրել թէ Մերութան եպ. Հայոց (Եւս. Պոմ. Եկեղ., 2., 46) Փոքր-Հայոց էր՝ Դեկոսի հալածանաց ատեն, եթէ Ծովիաց կամ նաեւ Մեծաց Հայոց (հմմտ. Դիւլչէնի մեկնութիւնը՝ ՀԱ, 1910, էջ 268 ff.): Կասկածի տեղի տուողն է պարզապէս հայաձեւ անունը, մինչ բուն Փոքր-Հայոց ալ այն շրջաններուն շատ սովոր չենք այսպիսի անունաց հանդիպելու: Իսկ դամբական եւ նաեւ բուն Հայաստանի կրօնաւորական եւ նաեւ կրթական եւն յարաբերութեանց նախն կը բաւէ իսկ յիշել Ս. Գրիգոր Լուսաւորիչ: Եւ իւր շրջանը եւ Կեսարիոյ ու Սերաստիոյ եւ Մելիտինեայ կարեւոր դերը: Բացառից եւ Մելիտինեայ կարեւոր դերը: Պէտք չկայ հոս մտնել մանրամասնութեանց մէջ՝ այս ամէն խնդրոցս: Միայն գիտենք

թէ Փոքր-Հայոց նոյն իսկ հոծ հայութիւնը, թո՛ղ Կողովներէնց եւ շրջակայիցը տկարաթիւ հայութիւնը, բոլորովին իսկ կը կորսուէին՝ հեղինացման այս դօրաւոր եւ դարաւոր շրջանին, ինչպէս եղան Գամիլը՝ որոնք անհամեմատ մեծ էին իբր ազգ քան Հռոմէացիք — Նիկոպոլիս եւն նոյնչափ հեղինացման կեդրոններ էին, ինչպէս Սերաստիա՝ Կողովներէի համար, եւ միւսները՝ իրենց շրջանին, — եթէ չըլլար սահմանակից Հայաստանի այն սերտ յարաբերութիւնը՝ որ բնականապէս դոյութիւն ունէր հոսց ի վեր: Եւ եթէ Պոնտական Կոմանա՝ օրինակի համար՝ նաեւ Փոքր-Հայոց համար կարեւոր կրօնական կենդրոն մըն էր վաղնջուց իսկ, բայց նոյնչափ կարեւոր շահաստան էր միանգամայն Հայաստանէ եկած ամէն տեսակ ապրանքներու («մին ի գլխաւոր մթերանոցաց վաճառացն եկելոց ի Հայոց», Ստրաբ., ԺԲ., 3): Վերջապէս իրաց վիճակը լաւ կը բացատրէ նոյն իսկ Գ. դարու վերջերը Ս. Բարսիլը (— Կեսարու հայրապետը կը ստորադրէին «Կեսարիոյ, Կապադոկիլիոյ, Գաղատիոյ եւ Հայոց աշխարհին՝ Փոքուն եւ Մեծին» —) հովուական այցելութեան ատեն ի Փոքր-Հայոց (Նիկոպոլիս-Սատաղ) դժուարութիւն կ'ունենար փոքրհայկան թեմերուն եւ աթոռներու համար հայերէն գիտցող կղերականներ դանելու (Migne, PG, 32, p. 502, եւ այլուր՝ Նամակաց մէջ): Պէտք չեն մոռցուիլ այս պարագաները՝ փոքրհայկան հնութեան վիճակին մասին խօսք եղած ատեն: Արդէն եթէ չըլլար նոյն դարու վերջերը Յունահայաստանի մը ստեղծումը (Յունաց բաժին՝ 387էն) եւ անընդատ դադարակալութիւնք այնուհետեւ, մանաւանդ վասպուրականի մեծ գաղթականութիւնը, դժուար էր թէ հայութեան հետք մնար նոյն իսկ բուն Փոքր-Հայոց մէջ, թո՛ղ թէ Սերաստիա եւ Պոնտական միւս մասերու մէջ: Սակայն անցնինք ահնարիկ մը ձգելու յաջորդ ժամանակաց ալ վրայ:

Բ. դարը գոնէ կրկին մեծ փորձեր տեսաւ Հռոմայեցւոց կողմանէ՝ հռոմէական նահանգ ընելու նաեւ Հայաստանը, կամ գոնէ մի մասը, թէեւ երկուքն ալ ի վերջոյ չաջուղեցաւ: Երկարատեւ խաղաղութենէ մ'ետքը, Աշխարհար դահ հանուած էր Հայոց՝ Պարթեւաց Բակրոյ Բ. (77—110 Յ. Ք.) կողմանէ, իսկ Խոսրով (իբր 108—130) դահ հա-

